

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ -1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ

Տարեկան հաշվետվություն

2008թ

Հասցե ք.Երևան 0023, Արշակունյաց փ, 12

Հեռախոս . 52-53-21

Ֆաքս 52-57-13

Էլփոստ Info@yerjewel.com

Ինտերնետ կայք www.yerjewel.com

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կառավարման մարմինների տարեկան զեկույց	-1
Ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկություններ	-1
Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ	-2
Ընկերության կառավարման մարմինների վերաբերյալ տեղեկություններ	-5
Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը	-6
Կառավարման մարմինների հայտարարություն	
Անկախ աուդիտորական եզրակացություն	
Տարեկան ֆինանսական հաշվետվություն	

Կառավարման մարմինների տարեկան զեկույց

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ն զբաղվում է ոսկերչական իրերի, ժամացույցների, պետական մեդալների, շքանշանների, հուշամեդալների արտադրությամբ և ադամանդների մշակմամբ: Լինելով երկրում ամենախոշոր ձեռնարկություններից մեկը՝ վերջինս արտադրում էր ոսկյա և արծաթյա իրեր ավելի քան հազար տեսակ:

Ընկերությունն ունի շքանշանների, մեդալների, հուշամեդալների և «ԳՆՈՄՈՆ» ֆիրմային ոսկյա ժամացույցների արտադրական գործունեությունը բարեհաջող իրականացնելու համար անհրաժեշտ հարմարությունները: Ընդլայնման ծրագրի համար Ընկերությունը լրացուցիչ արտադրական հարմարություններ հիմնելու կարիք ունի: Ներկայումս արտադրությունը իրականացվում է հիմնական և հարակից արտադրամասերում, թանկարժեք մետաղների հալման հոսքագծերով և այլ մեքենաներով:

Ընկերության շքանշանների, մեդալների, ոսկյա հուշամեդալների և «ԳՆՈՄՈՆ» ֆիրմային ոսկյա ժամացույցների արտադրանքի հիմնական մասը իրացվում է ներքին շուկայում, իսկ մնացած մասը արտահանվում է ԱՊՀ երկրներ:

Ընկերության ներկայիս տարեկան արտադրական հզորությունն է 50000 – 60000 հատ շքանշաններ, մեդալներ, հուշամեդալներ և 10000 հատ «ԳՆՈՄՈՆ» ֆիրմային ոսկյա ժամացույցներ, ներառյալ թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ոսկու գնի կտրուկ տատանումների հետևանքով ռիսկերի կառավարման հնարավորությունը նվազում է, որի արդյունքում ոսկերչական իրերի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների շրջանակը կտրուկ նվազում է: Սակայն ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի վերը նշված հզորությունների և ճշգրիտ սարքավորումների տեխնիկական հզորությունների վրա, կատարում է կոնստրուկտորատեխնոլոգիական մշակման, նոր ոսկերչական իրերի ստեղծման և արտադրությունում ներդնելու ուղղությամբ աշխատանքներ՝ միաժամանակ ապահովելով շուկայի մարկետինգային ուսումնասիրություններ և նոր գնորդների հայտնաբերում:

Ընկերության վերջնական նպատակն է հզորությունների առավելագույն օգտագործմամբ նվազեցնել արտադրական ծախսերը, կրճատել աշխատատարությունը, փոփոխել արտադրական կառուցվածքը, որոնց շնորհիվ իջեցնել արտադրանքի ինքնարժեքը՝ ապահովելով բարձր շահութաբերություն:

Ընկերության գործունեության հիմքը մարքետինգային, գովազդային, ոսկերչական իրերի դիզայնի և տեխնոլոգիաների մշակումն է, մոդելների և փորձնական նմուշների պատրաստումն է: Հիմնական խնդիրը շուկայի համալիր ուսումնասիրումը, ապրանքների կայուն իրացման ապահովումը, արտադրության շուկայական կողմնորոշումն է:

Ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության արտադրության ուղղություններն են.

- ոսկերչական իրերի պատրաստում և վաճառք;
- ոսկյա ժամացույցների(նաև թանկարժեք քարերով) պատրաստում և վաճառք;
- թանկարժեք և գունավոր մետաղներից մեդալների, շքանշանների, հուշամեդալների պատրաստման պատվերների կատարում;
- ոսկերչական արտադրության սարքավորումների, հանդերձանքի, գործիքների պատրաստում և վաճառք;
- ծառայությունների մատուցում ;

Ընկերության արտադրանքի արտահանման հիմնական միջոցներն են.

- 1/ Ավիատոլիները
- 2/ Սուրհանդակային ծառայությունները
- 3/ Բեռնափոխադրող կազմակերպությունները:

Ստորև բերվում է Ընկերության արտադրանքի թողարկման և իրացման ծավալների դինամիկան (հազ.դրամ) վերջին երեք տարում:

Արտադրանքի թողարկում			Արտադրանքի իրացում		
2006թ.	2007թ.	2008թ.	2006թ.	2007թ.	2008թ.
2.310.118	1.074.139	1.656.708	3.421.974	2.432.409	1.260.707

Ընկերության արտադրանքի իրացման 14.29 % կատարվել է արտաքին շուկայում, իսկ 85.71 %՝ ներքին շուկայում:

Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ

Ամփոփ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (հազ.ՀՀ դրամ)
2008թ.

Աղյուսակ 1

Ցուցանիշի անվանումը	2008թ.
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	1260707
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(1097746)
Համախառն շահույթ (վնաս)	162961
Իրացման ծախսեր	(24431)
Վարչական ծախսեր	(78602)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	59928
Գործառնական այլ եկամուտներ	170316
Գործառնական այլ ծախսեր	(126543)
Գործառնական շահույթ (վնաս)	103701
Ֆինանսական ծախսեր	(16267)
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս) Ընդհատվող գործառնությանը վերագրելի ո	-
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	-
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	(5545)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	81889
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	-

Ջուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	81889
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(18042)
Ջուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	63847

Ամփոփ Հաշվապահական Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ (հազ.ՀՀ դրամ)
Աղյուսակ 2

Ցուցանիշի անվանումը	2008
Հիմնական միջոցներ	1561081
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	44362
Ոչ նյութական ակտիվներ	23553
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	-
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	76
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	63961
<i>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</i>	1693033
Պաշարներ	1748061
Տրված ընթացիկ կանխավճարներ	12661
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	913626
Այլ դեբիտորական պարտքեր	7291
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12939
Այլ ընթացիկ ակտիվներ	2692
<i>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</i>	2697270
<i>Ընդամենը ակտիվներ</i>	4390303
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	1095340
Էմիսիոն եկամուտ	-
Կուտակված շահույթ	(3744)
Պահուստային կապիտալ	14246
Սեփական կապիտալի այլ տարրեր	711767
<i>Ընդամենը սեփական կապիտալ</i>	1817609
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	98082
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	-
<i>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</i>	98082
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	52394
Կրեդիտորական պարտքեր գումարների գծով	2334734
Ստացված ընթացիկ կանխավճարներ	65834
Այլ կրեդիտորական պարտքեր	19423
Այլ ընթացիկ պարտավորություններ	2227
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	2474612
Ընդամենը պարտավորություններ	2572694
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	4390303

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ տվյալներ դեկտեմբերի 31-ի դրությամբ
(հազ.ՀՀ դրամ)

Աղյուսակ 3

Ցուցանիշի անվանումը	2008
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	11353
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	109514
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(10826)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(95793)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	12939

Ֆինանսական գործակիցներ

Աղյուսակ 3

Ցուցանիշի անվանումը	2008
Չուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	0.06
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	0.04
Ակտիվների շահութաբերություն (ROA)	0.02
Չուտ շահույթի մարժա (NPM)	0.05
Կապիտալի համարժեքության գործակից	0.41
Ֆինանսական կախվածության գործակից	1.42
Բացարձակ իրացվելության գործակից	0.01
Ընթացիկ իրացվելության գործակից	0.38
Ընդհանուր իրացվելության գործակից	1.09
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	1.98
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	184.34
Պաշարների շրջանառելիության գործակից	1.56
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	233.97
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	0.52
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	701.92

Հարկային պարտավորություններ 08թ. ԵՈԳ -1 «ԳՆՈՍՈՆ» ԲԲԸ

	մն.01.01.08թ.	հաշվ.	վճար.	մն.31.12.08թ.
ԱԱՀ	4 069,0	61 376,7	60 100,0	5 345,7
Եկամտահարկ	(1996,1)	13 407,0	13 053,8	(1642,9)
Շ/հ 1% կանխավճար	884,4	11 810,0	12 694,4	0,0
Գույքահարկ	0,0	726,0	726,0	0,0
Ընդամենը	2 957,3	87 319,7	86 574,2	3 702,8
Սոցապ վճար	2300,7	28645,7	28351,9	2594,5
Այլ հարկեր,տուրքեր	0,0	350,0	350,0	0,0
Հողի հարկ	0,0	259,4	259,4	0,0
Բնապահպանական	6,5	36,6	29,7	13,4

վճար

Տույժ.տուգանք

Ընդամենը 6,5 646,0 639,1 13,4

Ամբողջը 5 264,5 116 611,4 115 565,2 6 310,7

Ընկերությունը բյուջեյի, սոցապի նկատմամբ պարտավորությունները կատարում է ժամանակին:

Ընկերության կառավարման մարմինների վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության կանոնադրության սահմանված ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը և Ընկերության գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը: Ընկերության կառավարմանը մասնակցող անձինք են՝ Էմիլ Գրիգորյանը (գլխավոր տնօրեն), Վահան Խաչատրյանը (գլխավոր հաշվապահ):

Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը

Տեղեկություններ Ընկերության նախատեսվող գործնության վերաբերյալ:

2009 թվականին նախատեսվող աշխատանքներ.

- 75 նոր ոսկերչական իրերի մշակում և արտադրություն,
- 2 նոր ժամացույցների մոդելների (ռուսական և շվեյցարական մեխանիզմների բազայի վրա) արտադրություն,
- 40 - 65 տիպի հոբեյանական մեդալների, հուշամեդալների, պետական շքանշանների և մեդալների արտադրություն.

Ընկերության արտադրանքի սպառման հիմնական շուկաներն են հանդիսանում՝

- Ռուսաստանի Դաշնություն
- Ղազախստան
- Մոլդովա
- Գերմանիա
- Թուրքմենիա
- ԱՄՆ

Ընկերության նպատակն է ներկայացվող ծրագրի միջոցով պետական և գերատեսչական շքանշանների, մեդալների, հուշամեդալների, ինչպես նաև պետական այլ կառույցների կողմից թողարկվող դրամանիշերի ու հուշամեդալների իրացման շրջանառությունը հասցնել ներքին շուկայի պահանջարկի մինչև 80 %-ը, իսկ ոսկյա ժամացույցների՝ 65 %-ը:

Ընկերությունը նախատեսում է շքանշանների, մեդալների, հուշամեդալների, հուշանվերների և «ԳՆՈՄՈՆ» ֆիրմային ժամացույցների արտադրության բոլոր տեղամասերը տեղափոխել մեկ շենք, որը կապված է այս արտադրության առանձնահատկությունների հետ: Ծրագրի իրականացումը նախատեսված է ավարտել երկու տարվա ընթացքում:

Ընկերությունը ուսումնասիրել է անհրաժեշտ սարքավորումների պահանջը և առաջարկը, և որոշում է կայացրել գնելու Իտալական, Գերմանական և Բելգիական արտադրության լավագույն սարքերը: Մնացած սարքավորումները արդեն առկա են գործարանում և շահագործման մեջ են:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

10 ապրիլի 2009թ.

Էմիլ Գրիգորյան

Գլխավոր տնօրեն

Վահան Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ

Երևան, Գ. Լուսավորչի 15/1
tsh. (374-10) 58-07-45
faxsh. (374-10) 52-69-41
E-mail: hayaudit@hayaudit.com
URL: www.hayaudit.com

15/1 G.Lusavorchi str., Yerevan
tel. (3741) 58-07-45
fax (3741) 52-69-41
E-mail: hayaudit@hayaudit.com
URL: www.hayaudit.com

04 N 2-02
« 01 » 04 2008 թ.

Ա Ո Ւ Դ Ի Տ Ո Ր Ա Կ Ա Ն Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Երևանի ոսկերչական գործարան-1
«ԳՆՈՍՄՆ» ԲԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովին

Մենք առողիտի ենք ենթարկել «Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՍՄՆ» ԲԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) հաշվապահական հաշվեկշիռը առ 31-ը դեկտեմբերի 2008թ., ինչպես նաև հաշվառու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները (այսուհետև՝ ֆինանսական հաշվետվություններ):

Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պարտավանությունն է անցկացված առողիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք առողիտն անցկացրեցինք Հայաստանի Հանրապետության առողիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք առողիտը պահանջներ և իրավահավասարեցնենք՝ ֆինանսական հաշվետվությունները նաև խեղաբյուրյուններից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձևեր ընելու նպատակով: Առողիտրական աշխատանքները ներառում են թեստային ինժեներներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը և բացահայտումները: Առողիտրական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, Ընկերության ղեկավարության կողմից կատարված նաև արժեքների գնահատումների հետազոտումը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված առողիտրական աշխատանքների արդյունքները բավարար ինքն են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

1. Ընկերության հաշվապահական հաշվառման բաղադրականորեն համաձայն իրենական միջոցների հաշվառման իրականացվում է ՀՀՀ ստանդարտ 16-ի «Իրենական մուտքում» մերտով, սակայն 31.12.2008թ. դրությամբ հաշվապահական հաշվեկշիռում առկա 1408846.0 հզ. դրամ սկզբնական արժեք տնցող իրենական միջոցներից 74626.0 հզ. դրամի իրենական միջոցները հաշվեկշիռային արժեք չունեն:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները, բացի վերը նշված հանգամանքներից, մնացած բոլոր նաև առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ առ 31-ը դեկտեմբերի 2008թ., ինչպես նաև հաշվառու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքները, սեփական կապիտալում փոփոխություններն ու դրամական հոսքերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներին:

Նկատար *[Signature]* Գրիգորյան
Առողիտոր *[Signature]* Մ. Ստեփանյան

